Հուսիկ Արա

Մի՛ ուրացիր, քաղաք

Քո եղբայրն եմ ես, քաղա՛ք, իմ անունով կանչիր ինձ.
ժամանակ չգտա հենց սկզբում խոստովանել քեզ,
քանի որ մեր արյան ու երազի մնացորդից
գույներ էինք ընտրում վերջին հեղափոխության դրոշին
և զենք կիսում հացի փոխարեն,
երբ պատերազմ էր բոլոր խրամատներում:
Հետո տունդարձի ճանապարհն էինք անվերջ փնտրում,
ուր, կարծում էինք, ջերմություն կգտնենք և տաք կերակուր:
Իսկ վաղը, երբ իմ ամպած երկնքում սև տարածվի ագռավը,
քո մտահոգ ձեռքով կիջեցնես կոպերս վերջին անգամ
ու թևերիդ վրա համր կտանես մարմնիս ավերակը՝
ամփոփելու մոտիկ բլրալանջին՝ մյուս եղբայրներիդ կողքին:
Պարտքդ կատարած՝ կտրուկ կշրջվես սգո թափորին,
մեռա՛վ եղբայրս՝ կասես,
ու մատով ցույց կտաս նրանց մեջ մեկին,
հավաստելով՝ հիմա դու ես իմ եղբայրը,
ու կքայլես տուն՝ այնպես թեթև, անփույթ.
որ կյանքս՝ քեզ մոտ ու արյունակից, չէր էլ եղել կարծես:
Ես քո եղբայրն եմ, քաղաք, ինձ մի՛ ուրացիր: